«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքների կազմակերպման ձևերը.ինքնաստուգում ինքնավերահսկում

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝Գալստյան Գայանե

Ուսումնական հաստատություն՝Օձունի թիվ 1 միջն.դպրոց

Երևան 2022

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Բովանդակություն

1.Ներածություն: Հետազոտության նպատակները,խնդիրները:

2.Ինչպիսի՞ ուղիներով է հնարավոր արդյունավետ կազմակերպել ինքնուրույն աշխատանքները սովորողների հետ:

3. Ինչպե՞ս իրականացնել ինքնաստուգում և ինքնավերահսկում :

4.Եզրակացություն:

5.Օգտագործված գրականության ցանկ:

1.Ներածություն: Հետազոտության նպատակները,խնդիրները:

Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ի՞նչ ուղիներ կարող ենք օգտագործել սովորողների հետ:Ինչպե՞ս իրականացնել ինքնագնահատում և ինքնավերահսկում դպրոցում:

Աշխատանքի նպատակն է սահմանել այն ուղիները,արժեքավոր մտքերը, գաղափարները, որոնք այսօր կարելի է արդյունավետ կիրառել դպրոցում ինքնուրույն աշխատանքները կազմակերպելու,ինքնագնահատում և ինքնավերահսկողություն իրականացնելու համար:

Հետազոտության խնդիրն է՝

1.Բնութագրել աշակերտների ինքնուրույն գործունեության նպատակը դպրոցում:

2.Բնութագրել աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը:

3.Ներկայացնել աշակերտների ինքնուրույն աշխատանքների դասակարգման հատկանիշները :

Դպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և

պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Փորձենք բնութագրել սովորողների

ինքնուրույն աշխատանքի կազմակերպման մի քանի նախապայմաններ: Առաջին՝ դիտարկում ենք ուսուցչի կողմից իր մասնագիտական առարկաներից սովորողի համար մշակված ինքնուրույն աշխատանքի թեմատիկան։Սովորողի ինքնուրույն աշխատանքի այս համակարգի մշակումը կնպաստի այդ աշխատանքի կատարելագործմանը; Դրա համար անհրաժեշտ է՝

-զարգացնել սովորողների մոտիվացիան, հետաքրքրությունն ուսման նկատմամբ և այն դիտել որպես գիտելիքների յուրացման միջոց,

-սովորողներին զինել ինքնուրույն աշխատանք կատարելու համար անհրաժեշտ կարողություններով ու հմտություններով,

- համակարգված օգնություն ցույց տալ սովորողի կատարելիք աշխատանքին,

-կատարելագործել ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը:

Սովորողի ինքնուրույն աշխատանքը չի տա ցանկալի արդյունք, եթե այն չվերահսկվի, քանի որ ուսուցման արդյունավետությունը կախված է ոչ միայն սովորողի իմացական գործունեության բնույթից, այդ գործունեության կառավարման որակից, այլև վերահսկման բնույթից և նրա նկատմամբ սովորողների ունեցած վերաբերմունքից:Ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ։Ուսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ: Անկասկած, այդ

հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել,բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ։Նախ տեսնենք,թե ինչ են ներկայացնում «ինքնուրույնություն» և «ինքնուրույն աշխատանք»

արտահայտությունները։Ինքնուրույնությունն անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև: Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատի որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Դասերի ընթացքում գերակշռում է ուսուցման ճակատային ձևը, երբ աշակերտների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից: Այդ գործողությունները հիմնականում կատարվում են գրատախտակի մոտ: Այսպիսի գործողությունները արգելակում են երեխաների զարգացումը, և արդեն V դասարանում սովորողները հայտնվում են անօգնական վիճակում՝ գրքի շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքների ինքնուրույն լուծման, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման ընթացքում: Առաջադրանքների ծավալը նրա ուժերից վեր է դառնում, աշխատանքի տեմպը՝ դանդաղ:

Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար,

դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին,որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները,

օրինաչափությունները,դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները,որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար[1]:

Որո՞նք են աշակերտների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը:

-Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:

-Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքների կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

-Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

-Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում են ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

Այսպիսով,վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը դպրոցականների ուսուցման գործընթացում:Ինքնուրույն աշխատանք ծավալելու կարողության ձևավորումը

հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով:

1.Տե՛ս Հակոբյան Ն., Գևորգյան Ս. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2010, էջ 63-64:

2.Ինչպիսի՞ ուղիներով է հնարավոր արդյունավետ կազմակերպել ինքնուրույն աշխատանքները սովորողների հետ:

Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է որոշակի փուլեր.

1. կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:

2. հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:

3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իրենց ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այլն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի

կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը:Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում են նաև թեմայի շուրջ մշակված պաստառները,սխեմաները և այլն:Այս փուլում ձևավորվում է ուսումնական

աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. հիմնական փուլ. Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

6.ամփոփիչ փուլ.Այս փուլում կատարվում է անդրադարձ:Ուսուցիչը գնահատում է, քննարկում , վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն,այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում: Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

-Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի որ փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,

-ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում:Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները:Միայն այս դեպքում ինքնուրույն

աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման

ձևերի մասին: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական հնարներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով:Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն:Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ:Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:Դիտարկենք ,թե ինքնուրույն աշխատանքի ի՞նչ տեսակներ կարելի է կիրառել դպրոցում:Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների, որոնք միևնույն ինքնուրույն աշխատանքը բնութագրում են տարբեր տեսանկյուններից: Ստորև ներկայացնենք ինքնուրույն աշխատանքի տեսակները.

1.Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող

2.Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող

3.Գիտելիքները համակարգող

4.Որոշակի կարողություններ զարգացնող

5.Ստուգող, վերահսկող։

Կրթության բարելավման հարցերը մշտապես գտնվել են բոլոր զարգացած երկրների ուշադրության կենտրոնում:Բարելավման միջոցներից է ինքնուրույն աշխատանքների արդյունավետ կիրառումը։Աշակերտների ինքնուրույն աշխատանքը առաջին հերթին նրանց ինքնուրույն մտածողությունն է, որը դրսևորվում է աշակերտակենտրոն, արդյունավետ ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառության ժամանակ: Ի՞նչ ընդհանրացում կարող եք կատարել։Առաջադրանքը կատարելիս հետևություններ են անում՝ նախ անհատապես աշխատելով, ապա ստուգում են իրենց ստացած արդյունքը:

Այսպիսվ,եզրակացնում ենք,որ դպրոցի հիմնական խնդիրն ուսումնական գործունեություն իրականացնելուն ունակ (սովորելու կարողություն ունեցող) երեխայի ձևավորումն է:Դրան հասնելու արդյունավետ ուղիներից մեկն ինքնուրույն աշխատելու կարողության ձևավորումն է։Ավելի հաճախ սովորողների ինքնուրույն աշխատանքը օգտագործվում է դասարանում վարժությունների կամ խնդիրների լուծման ժամանակ, քանի որ միայն այդպես կարելի է ամբողջ դասարանին նախապատրաստել տնային աշխատանքների արդյունավետ ու հաջող կատարմանը: Նկատենք, որ ինքնուրույն աշխատանքի կատարմանն այդ դեպքում նախորդում է ուսուցչի կողմից նմուշային վարժությունների կամ խնդիրների լուծումը: Ինքնուրույն աշխատանքների ժամանակ ուսուցիչը չպետք է աչքաթող անի թույլ սովորողներին, ամեն կերպ ինքը կամ էլ խմբային աշխատանքի ժամանակ խմբի ուժեղ աշակերտներից մեկը պետք է աջակցի նրանց՝ կազմակերպելու վերջիններիս ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների մի շատ կարևոր ու օգտակար տեսակ է բանավոր վարժությունների լուծումը: Դրանք ունեն

դիդակտիկական մեծ նշանակություն, քանի որ նպաստում են աշակերտների գիտելիքների գիտակցաբար, խորը և ամուր յուրացմանը, նրանց ինքնուրույն և ստեղծագործական մտածողության ձևավորմանը:

3. Ինչպե՞ս իրականացնել ինքնագնահատում և ինքնավերահսկում :

Ի՞նչ ենք հասկանում «ինքնագնահատում»««ինքնավերահսկում» ասելով: Գնահատումը սովորողների ուսումնական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու,կուտակելու,վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային,կազմակերպական արդյունքներն ի հայտ բերելու և վերահսկելու գործընթացն է,իսկ գնահատման նպատակը գիտելիքների,կարողությունների և հմտությունների ,արժեհամակարգի տիրապետման և անձնային առաջընթացի որակի վերահսկումն է:Ըստ Դ.Բ.Էլկոնինի՝ արդյունավետ ուսումնական գործունեության հիմնական առանձնահատկությունն այն է, որ աշակերտը փոխում է ինքն իրեն: Սա նշանակում է, որ դպրոցականն անտարբեր չէ իր գործունեության նկատմամբ, գիտակցում է գիտելիքներ ստանալու կարևորությունը, կարողանում է պարզ ենթադրություններ կատարել և փաստարկներ գտնել դրանց հիմնավորման ու ապացուցման համար,վերլուծում է իր գործունեությունը, գնահատում է հաջողությունները, որոշում է անհաջողությունների կամ սխալների պատճառները և փորձում դրանք ուղղել: Բայց դա հնարավոր է, եթե ձևավորվում է ուսումնական գործունեություն ծավալելու աշակերտի կարողությունը, և նա դառնում է ուսուցման գործընթացի սուբյեկտ: Աշակերտին սովորել են սովորեցնում, երբ նա ուսուցման արդյունքների հարցում զգում է անձնական պատասխանատվություն, ունի ինքնակրթության և ինքնազարգացման,ինքնագնահատման կարողություններ:Ուսուցիչը պետք է գնահատման որոշակի չափանիշներ, կողմնորոշիչներ ներկայացնի երեխային, որի արդյունքում նա կկարողանա գնահատել սեփական աշխատանքի արդյունքները: Խոսելով ինքնագնահատականի մասին՝ պետք է նշել, որ երեխան հիմնականում դպրոց է գալիս բարձրացված ինքնագնահատականով: Ընդհանրապես, երեխայի

կողմից բարձր է գնահատվում այն աշխատանքը, որն արագ է արվում, որի վրա ինքը շատ ջանքեր է ծախսում՝ հաճախ անտեսելով ստացած արդյունքը։ Ի դեպ՝ դպրոցականն ավելի քննադատաբար է մոտենում ընկերների աշխատանքին՝ բարձր արժևորելով սեփական աշխատանքը։ Հարկավոր է հասնել նրան, որ երեխան գնահատի ոչ միայն իր աշխատանքի վերջնարդյունքը, այլև իր ուսումնական գործունեության ողջ գործընթացը:

10

Ուսումնական գործունեության կառուցվածքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում վերահսկողության գործողությունը, որն ունի հատուկ գործառույթներ. այն ամրագրում է սովորողների վերաբերմունքն առարկայի նկատմամբ։Ինքնակառավարումը հոգեբանական տերմին է, որը ենթադրում է սեփական գործողություններն ու զգացմունքները կառավարելու կարողություն։ Ըստ Դ.Բ. Էլկոնինի, դա վերահսկողության գործողությունն է, որը բնութագրում է ողջ կրթական գործունեությունը որպես կամայական գործընթաց, որը վերահսկվում է հենց երեխայի կողմից: Ուսումնական գործունեության կամայականությունը որոշվում է ոչ այնքան ինչ-որ բան անելու մտադրության առկայությամբ և սովորելու ցանկությամբ, այլ մոդելին համապատասխան գործողությունների կատարման վերահսկմամբ: Այդ իսկ պատճառով ուսուցման խնդրի լուծման գործընթացում հսկողության գործողությանը տրվում է հատուկ նշանակություն:
Ուսուցման գործընթացում ինքնավերահսկում իրականացնելու տարբեր եղանակներ կան,այն է՝

1.Վերահսկում ըստ արդյունքի կամ,այսպես կոչված, վերջնական վերահսկողության (սա ինքնավերահսկման սկզբնական և ամենապարզ ձևն է, որը յուրացնում են սովորողները։ Նրա գործառույթը արդյունքը տվյալ նմուշի հետ համեմատելն է, այսինքն՝ կատարվում է ստուգում։ Ստուգման գործընթացում երեխաները համոզվում են, որ պատասխանը բավարարում է բոլոր նախնական պայմաններին, հակառակ դեպքում լուծումը սխալ է):

2.. Քայլ առ քայլ կամ ըստ մոդելի :Այս եղանակի գործառույթը կատարվող գործողությունների ամբողջականությունը, ճշտությունը և հաջորդականությունը

բացահայտելն է: Վերահսկողության այս տեսակն առաջին հերթին սովորողների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա,թե ինչպես են նրանք իրականացնում գործողությունը:

3. Նախնական (կանխատեսող) հսկողություն ՝ աշակերտին որպես գործունեության առարկա հնարավորություն է տալիս կանխատեսել դեռևս չկատարված

գործողության արդյունքները: Վերահսկողության համակարգն ուղղված է սովորողների ռեֆլեքսիվ, տարբերակված, գիտակից, կայուն, համարժեք ինքնատիրապետման զարգացմանը: Այս համակարգը կարող է բերել ցանկալի արդյունքների, եթե ուսուցիչները հետևեն անվտանգության երկու հիմնական կանոններին երեխաների ինքնավերահսկման հետ կապված.

1. Նրանք անընդհատ նկատի կունենան, որ երեխաների ինքնավերահսկումն ապահով զարգանում է միայն դրական ընդհանուր վերահսկողության ամուր հիմքի վրա:

2. Զարգացնելով ինքնավերահսկման հմտությունները, ձգտելով դրանք դարձնել ավելի գիտակից, կայուն՝ մեծահասակները կկարողանան զերծ մնալ ավելորդ ոգևորությունից:

Ինքնվերահսկման ուսումնական գործունեությունը անցնում է ձևավորման մի քանի փուլով.

1. Մոտիվացիոն և ցուցիչ,

2. Գործառնական և գործադիր,

3. Վերջնական:

Մոտիվացիոն և ցուցիչ ինքնավերհսկման եղանակի դեպքում սովորողներին պետք է սովորեցնել ինքնավերահսկման և ուսումնական գործունեության

ինքնագնահատման,գնահատման գործունեության զարգացում։Գործառնական և պլանավորման ինքնավերահսկման և ինքնագնահատման ունակության ձևավորման արդյունքում դպրոցականները տիրապետում են գնահատման առարկան որոշելու և ընկալելու, սխալները վերլուծելու կարողությանը։Վերջնական արդյունքում կատարվում է կանխատեսված և ստացված արդյունքները համեմատելու հմտությունների ձևավորում, հաջողությունների և ձախողումների պատճառների վերլուծություն։

12

Այսպիսով,եզրակացնում ենք,որ ինքնուրույն աշխատանք կատարելիս մեծ նշանակություն ունի ինքնավերահսկումը,քանի որ դրա իրականացման փուլերը կարող է վերահսկել միայն ինքը՝ կատարողը։Ցանկացած աշխատանք չի կարող կատարվել առանց ինքնավերահսկման։Ինքնավերահսկողությունը սովորողները պետք է կատարեն թե տանը,թե դպրոցում։Ինքնավերահսկման հմտությունների զարգացումն անհնար է առանց այնպիսի մտավոր որակների զարգացման,ինչպիսիք են ուշադրությունը,երևակայությունը,կամքը,մտածողությունը և հիշողությունը։Ուստի դասապրոցեսի ընթացքում նպատակահարմար է օգտագործել առաջադրանքներ դրանց ձևավորման և կատարելագործման համար։Ինքնավերահսկողությունն ուղղված է գործունեության արդյունքին և միայն աստիճանաբար զարգանում է բուն գործունեության ընթացքը վերահսկելու ունակությունը։Ինքնավերահսկողությունը փոխում է նաև վերահսկվող գործողությունների բովանդակությունը։

4.Եզրակացություն։

Այսպիսով,եկանք եզրակացության,որ մանկավարժական գրականության մեջ 18-րդ դարի վերջից սովորողին ինքնուրույն աշխատանք կատարելու հմտություններ սովորեցնելը համարվում է դասավանդման առաջատար սկզբունքներից մեկը։ Սովորողների ինքնուրույնության և գործունեության զարգացման հարցը կենտրոնական է։ Կ.Դ. Ուշինսկին գրել է, որ «երեխաները պետք է ինքնուրույն աշխատեն, իսկ ուսուցիչը պետք է ղեկավարի այս անկախ աշխատանքը և նյութ տրամադրի նրանց»։ Նա հիմնավորեց դասարանում սովորողների ինքնուրույն

աշխատանքի կազմակերպման որոշ ուղիներ ու միջոցներ՝ հաշվի առնելով ուսուցման տարիքային շրջանները:Իսկ ի՞նչ ծավալով և ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար:Ըստ այդմ, առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու

համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմից ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան ըոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթաքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը: Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքերի բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել:Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը[2]: Սովորաբար աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար: Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին:Առավել դժվար է ընտրել յուրաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ:Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները:Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության

ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է դնում սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային

2.Տե՛ս Նեմով Ռ.Ս. Հոգեբանություն,Գիրք 2,1998, 608 էջ:

ջանքեր:Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման մերձակա գոտում , պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:Ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունների զարգացմանը զուգահեռ կարևոր է երեխային սովորեցնել կատարել ինքնագնահատում և ինքնավերահսկողություն:Ուսուցչի կողմից դրված նպատակները նպաստում են ընդհանուր ուսումնական և հատուկ կարողությունների, մտածողության, էմոցիոնալ զարգացմանը, խոսքի զարգացմանը, երկխոսության, հաղորդակցման, ինքնավերահսկողության և ինքնագնահատման ձևավորմանը և զարգացմանը:Սկզբում երեխաները կարող են կառավարել իրենց միայն ուսուցչի կողմից ներկայացված պատրաստի մոդելների համաձայն: Վերահսկողությունը ուսումնական գործունեության մի մասն է, բայց դա տարբերվում է ուսումնական այլ գործողություններից թե՛ իր բնույթով, թե՛ ձևավորման ձևով: Ցանկացած դասի ժամանակ երեխան սովորում է ինչ-որ բան անել ուսումնասիրվող առարկայի հետ՝ վերափոխում է այն, մոդելավորում դրա էական հատկությունները և այլն: Միևնույն ժամանակ, երեխան սովորում է վերահսկել այս բոլոր օբյեկտիվ գործողությունները: Այլ կերպ ասած, կրթական գործունեության վերահսկիչ մասի ճակատագիրն էապես որոշում է դրա զարգացման ազդեցությունը, նրա կենտրոնացումը երեխայի ռեֆլեքսիվ զարգացման վրա:

Այսպիսով, խոսելով սովորողների ինքնագնահատման, ինքնավերահսկման կարողությունների և հնարավորությունների մասին, անհրաժեշտ է հաշվի առնել աշակերտների պատրաստվածության մակարդակը և անհատական առանձնահատկությունները: Դպրոցականների տարիքային առանձնահատկությունները բացատրում են խաղային առաջադրանքների օգտագործմամբ և դիդակտիկ խաղերի մրցակցության տարրերով: Սա

աշխուժացնում է ուսումնական գործունեությունը, մեծացնում է հետաքրքրությունը և զարգացնում հավատը սեփական ուժերի և կարողությունների նկատմամբ:Արդյունքում սովորողները սովորում են աշխատել կոլեկտիվ, և միևնույն ժամանակ յուրաքանչյուրն ինքնուրույն: Առաջարկվող տեխնիկան ուսուցչին թույլ կտա դասը կազմակերպել այնպես, որ երեխաները գործնականում վարժվեն գնահատելու և վերահսկելու ոչ միայն իրենց ընկերներին, այլև ձևավորեն ինքնագնահատման և ինքնավերահսկման հմտություն:

5.Օգտագործված գրականության ցանկ՝

1.Էսիպով Բ.Պ., Սովորողների ինքնուրույն աշխատանքը դասին. - Մ., 1961:

2. . Նեմով Ռ.Ս. Հոգեբանություն,Գիրք 2,1998:

3. . Հակոբյան Ն., Գևորգյան Ս. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2010:

4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս I, 2013թ.:

5.Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, 2014 թ.: